ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլ. և գյուղատնտ. գիտություններ III, № 5, 1950 Биол. и сельхоз. науки

Վ. Ս. Զաքարյան

# ՄԻԱՄՅԱԿՆԵՐԻ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ ԱՌԱՆՑ ԲՈՒԹԱԿԻ

*Պտղաբուծության հիմնական խնդիրները և տնկարանների վերականգնման ու զարգացման ուղիները պարզ ու որոշակի նշված են ՍՍՌՄ-ի ժողտնտեսության վերականգնման ու զարգացման հետպատերազմյան 1946—50 թ. թ. հնգամյա պլանում։*

*Ներկայումս սովխոզներում ու կոլխոզներում նոր այգիներ հիմնելու հետ միասին մեծ աշխատանք է տարվում կոլխոզնիկների ու բանվոր-ծառայողների անձնական հողամասերում պտղատու ծառեր ու հատապտուղներ տնկելու ուղղությամբ։*

*Պտղաբուծության զարգացման ամենանեղ տեղը հանդիսանում են տնկարանները, որոնք իրենց արտադրանքով չեն բավարարում արտադրության պահանջներին։*

*Ի. Վ. Միչուրինը բազմիցս նշել է տնկարանների կարևոր դերը պտղաբուծության զարգացման գործում։*

*Անհրաժեշտ է հիշել Ի. Վ. Միչուրինի այն կարևոր ցուցումը, որտեղ նա նշում է, որ առանց արդյունաբերական օրինակելի տնկարանների լայն ցանցի, պտղաբուծության զարգացումն անհնարին է, որ այգիներ հիմնելու համար աշխատեցեք տնկանյութ ձեռք բերել մոտիկ տնկարաններից, որտեղ նրանք լավ հարմարված են տեղի աճեցողության պայմաններին։*

*Տնկարանների աշխատանքի հիմնական ցուցանիշը հանդիսանում է ստանդարտ տնկանյութի ելքը մեկ հեկտարից։*

*Հայկական ՍՍՌ-ի տնկարանների մեծ մասում տնկանյութի ելքը շատ ցածր է։ Ներկայումս տնկարանների հիմնական խնդիրն է բարձրացնել տնկանյութի արտադրանքի քանակը և լավացնել որակը։*

*Տնկանյութի ելքը բարձրացնելու գործում մի շարք ագրոմիջոցառումների թվում՝ դրական ազդեցություն է ունենում նաև տնկարանում միամյակներն առանց բութակի աճեցնելը։*

*Պտղաբուծության պրակտիկայում տնկարանների մեծ մասում միամյակներն աճեցվում են բութակով։*

*Բութակը վայրաղի (պատվաստակալի) հիմնական ցողունի մի մասն է, որի հիմքում գտնվում է պատվաստված աչքը։*

*Բութակին կապում են աչքապատվաստից աճող շիվը՝ նրան կոտրվելուց պահպանելու և ուղղահայաց ուղղություն տալու նպատակով։ Վայրաղների հեռացումը բութակ թողնելու համար կատարվում է, երբ նրանք ցուցաբերում են կենսունակության նշաններ, իսկ վերջնականապես հեռացվում են ամառվա երկրորդ կեսերին—օգոստոս ամսին։*

*Միամյակները բութակով աճեցնելը կապված է բանվորական շատ ձեռք խլող մի շարք, մեքենայացման չենթարկվող, աշխատանքային պրոցեսների հետ։*

Միամյակները բութակով աճեցնելու դեպքում հեռացնում են բութակի և պատվաստած աչքից ցած պատվաստակալի վրա եղած բոլոր ճյուղավորումները: Վայրաճների աճեցողությունը սկսելուց հետո շատ արագ կերպով բութակների վրա սկսում են աճել կողային ճյուղեր: Այս կողային ճյուղավորումներն անհրաժեշտ է անմիջապես հեռացնել: Ուշացնելու դեպքում նրանք ծախսում են սննդարար նյութերը և խիստ հետաձգում պատվաստած աչքերի արթնացումը և նրանց հետագա զարգացումը:

Բութակների առաջին մաքրումը կատարվում է, երբ բութակի վրա եղած բողբոջները սկսում են աճել: Ամեն 1—2 շաբաթից հետո այդ գործողությունը կրկնվում է: Հայկական ՍՍՌ-ի ցածրադիր գոտու տնկարաններում մանավանդ կոփիզավոր ապոտառ կալաուբաների վրա, հարկ է լինում այդ գործողությունը կրկնել 3—4 անգամ և նույնիսկ ավելի:

Միամյակը՝ բութակով աճեցնելիս, երբ պատվաստաշիվերը հասնում են 5—7 սմ երկարության, նրանց կապում են բութակին, իսկ երբ նրանք հասնում են 15—18 սմ երկարության՝ առաջին կապից որոշ բարձրության վրա կապում են երկրորդ անգամ: Երկրորդ կապի ժամանակ արձակում են առաջին կապը:

Երբ միամյա պատվաստաշիվերի ցողունների հիմքի մասերը փայտանում-ամրանում են, որը տեղի է ունենում մոտավորապես օգոստոսի առաջին կեսերին՝ բութակները դառնում են ավելորդ: Հենց այդ ժամանակ կապերը արձակում են և բութակները վերջնականապես հեռացնում այգու դանակով:

Այս աշխատանքը կատարելու համար պահանջվում են բավական որակյալ բանվորներ:

Պրոֆ. Գ. Կ. Շիտը խորհուրդ է տալիս բութակները հեռացնել հուլիս ամսի առաջին կեսերին:

Մի շարք տնկարաններում, պատվաստած աչքերի աճեցողությունը նպաստելու նպատակով, վայրաճների հեռացումը կատարվում է երկու գործողությամբ:

Վայրաճի առաջին հեռացումը կատարվում է, հենց որ նրանք ցուցաբերում են կենսունակության նշաններ, թողնելով աչքից վերև 10—12 սմ երկարության բութակ: Բութակի վերջնական հեռացումը կատարվում է երկու շաբաթից հետո, երբ պատվաստաշիվերը հասնում են 5 սմ երկարության:

Ի. Վ. Միչուրինի Կենտրոնական Ինստիտուտի Ագրոտեխնիկայի Սեկտորը 1931 թ. սկսել է ուսումնասիրել միամյակներն առանց բութակի աճեցնելու հնարավորությունը՝ մի անգամից, աչքի վերևից հեռացնելով վայրաճները: Վայրաճները հեռացնելիս կտրվածքը կատարել է 45° թեքությամբ:

Միամյակներն առանց բութակի աճեցնելու նկարագրված թե առաջին և թե երկրորդ ձևերի դեպքում էլ, պատվաստաշիվերին ուղղահայաց ուղղություն տալու և կոտրվելուց պաշտպանելու նպատակով կատարվում է պատվաստաշիվերի բուկլից երեք անգամ: Առաջին բուկլիցը կատարվում է վայրաճը հեռացնելուց անմիջապես հետո, երբ սկսել է աճել պատվաստած աչքը՝ հողով ծածկելով այն: Հետագա բուկլիցները կատարվում են բավական խորը, այնպես, որ ծածկվում են պատվաստաշիվերի ստորին մասերը,

Միամյակների աճեցման այս ձևը նույնպես պահանջում է բանուժի մեծ ծախսեր, որի հետևանքով արտադրության կողմից չի ընդունվել:

Ի. Ի. Լամինչուկը 1928—29 թվերին նույնանման փորձեր է կատարել Մլեթի փորձնական կայանում, իսկ 1934 թվին նա փորձերը կրկնել է Վրացական ՍՍՌ-ի Կախաբերի սովխոզում. ցիտրուսային կուլտուրաների նկատմամբ 1935—36 թվերին այդ ուղղությամբ աշխատանքներ տարվել են լայն արտադրական փորձի կարգով:

Փորձերի դրական արդյունքների հիման վրա 1938 թվից միամյակներն առանց բութակի աճեցնելու այդ ձևն ընդունվել է Վրացական ՍՍՌ-ի ագրոմիջոցառումներով և լայնորեն կիրառվում է ՍՍՌՄ-ի սուբտրոպիկ խոնավ գոտու բոլոր ցիտրուսային տնկարաններում:

Հայկական ՍՍՌ-ի տնկարաններում վայրաղների հեռացումը նույնպես կատարվում է երկու գործողությամբ, բայց այդ գործողությունները տեղի են ունենում ավելի մեծ ընդմիջումով՝ ապրիլից մինչև օգոստոս ամիսը:

Մեզ մոտ բութակների հեռացումը համընկնում է ամռան աչքապատվաստի աշխատանքների ժամկետների հետ: Այս պատճառով բոլոր տնկարաններում բանվորական ձեռքերի զբաղված լինելու հետևանքով բութակների հեռացումը ձգձգվում է:

Բացի դրանից վայրաղների հեռացումը կատարվում է ամառվա ամենաշոգ ամսին, կտրվածքի մակերեսը արագ չորանում է, որի հետևանքով բութակների հեռացվելուց առաջացած վերքերը մինչև աճեցողության վերջը կալյուսային հյուսվածք չեն առաջացնում և չեն ծածկվում:

Հայկական ՍՍՌ-ի ցածրադիր գոտում, որտեղ ամառը խիստ քամիներ են լինում, միամյակներն առանց բութակի աճեցնելու հնարավորությունը պարզելու համար 1947 թվից մի շարք տնկարաններում տարվում են աշխատանքներ:

1947 թվին փորձը դրվել է Գյուղ. Մինիստրության պետական տնկարանում, փորձի տակ ընդգրկելով երկու սորտ դեղձ (ճուգուրի, նարինջի) և մեկ սորտ ծիրան (Երևանի):

1948 թվին փորձը կրկնվել է ավելի լայն ծավալով՝ կոլխոզային և սովխոզային հինգ տնկարաններում, ընդգրկելով չորս սորտ ծիրան (Երևանի, սաթենի, կանաչենի և վաղահաս խոսրովենի), երկու սորտ դեղձ (նարինջի, լոձ) և երեք սորտ խնձոր (Կանադական ռենետ, Լոնդոնի պեպին և ամառային սպիտակ կալվիլ):

1949 թվին այդ ուղղությամբ աշխատանքներ են տարվել Պտղաբուծական ինստիտուտի, Նորագավիթի կոլխոզի և Գյուղ. Մինիստրության պետական տնկարաններում:

Փորձարկվել են վեց սորտ ծիրան (Երևանի, խոսրովենի, աղջանաբաղ, ռուխին, աբութալիբի, սաթենի), երեք սորտ դեղձ (նարինջի, լոձ, ճուգուրի), երկու սորտ խնձոր (ռենետ Սիմիրենկո, բելֆլյոր դեղին) և մեկ սորտ տանձ (մայրուշա):

1947 և 1948 թվերին վայրաղների հեռացումը կատարվել է, երբ պատվաստաշիվերը հասել են 4—5 սմ երկարության և տնկարաններում սկսվել է վայրաղների մասսայական հեռացումը՝ թողնելով բութակ:

1949 թ. վայրաղների հեռացումը կատարվել է երկու ժամկետում:

Առաջինը՝ երբ վայրացները և նրանց վրա պատվաստած աչքերը հայտնաբերել էին կենսունակություն՝ անկյուղության պրոցեսները սկսելու համար։ Երկրորդ ժամկետ՝ երբ պատվաստած աչքերը աճել էին 4—5 սմ երկարություն, և տնկարաններում սկսվել էր վայրացների մասսայական հեռացումը՝ բութակ թողնելու համար։ Վայրացները հեռացնելիս կտրվածքը կատարվել է աչքի վերևից՝ 45° թեքությամբ և վերքը ծածկվել մածիկով կամ օլիֆով։

Միաժամանակ կից շարքերում հեռացվել են վայրացները, թողնելով բութակ որպես կոնտրոլ։

Վայրացների հեռացման առաջին ժամկետի աշխատանքները կատարվել են Պտղաբուծ. Ինստիտուտի տնկարանում, փորձարկելով հինգ սորտ ծիրան (Երևանի, Խոսրովենի, Աղջանաբադ, Նարինջ, [illegible]), իսկ երկրորդ ժամկետը՝ Պետական տնկարանում և Նորագավիթի կոլխոզի տնկարանում, փորձի տակ ընդգրկելով երեք սորտ դեղձ (Նարինջի, Հաղթանակի, լոձ), երկու սորտ ծիրան (Երևանի, Սաթենի), երկու սորտ խնձոր (Ռենետ Սիմիրենկո, Զեյթուն բելֆլյոր) և մեկ սորտ տանձ (Մալաչա)։

Վեգետացիայի վերջում տարված հաշվառումները հետևյալ պատկերն են ներկայացնում (տես № № 1, 2 և 3 աղյուսակները)։

Աղյուսակներում բերված թվերից պարզ երևում է, որ առանց բութակի աճեցրած միամյակները, վայրացների հեռացման թե՛ առաջին և թե՛ երկրորդ ժամկետում, ունեն որակական լավ ցուցանիշներ։ Միամյակների երկարությունը, հաստությունը և ընդհանուր աճը ավելի բարձր է, քան կոնտրոլի մոտ։ Բացի դրանից առանց բութակի միամյակների մոտ վայրացների հեռացումից հետո կտրվածքի շուրջը գոյացել է խցանային շերտ, որի հետևանքով վերքի տրամագիծը բավական փոքր է, իսկ շատ դեպքերում վերքը բոլորովին ծածկվել է. կոնտրոլ միամյակների մոտ մինչև վեգետացիայի վերջը վերքերի խցանացում բոլորովին տեղի չի ունեցել և նրանց մակերեսը բավական մեծ է։

Այսպես օրինակ վայրացները հեռացնելու առաջին ժամկետում ծիրանի Երևանի սորտի միամյակների վերքի տրամագիծը հասնում է 0,1—0,5 սմ, միջինը 0,4 սմ և նրանց 30%-ը ունեն վերքերի լրիվ ներածում, իսկ կոնտրոլ միամյակների վերքի տրամագիծը հասնում է 0,8—1,6 սմ, միջինը 1,0 սմ։

Խոսրովենի սորտի առանց բութակի միամյակների վերքերի տրամագիծը կազմում է 0,1—0,6 սմ, միջինը 0,3 սմ, իսկ 28%-ը ունեն վերքերի լրիվ խցանացում։ Կոնտրոլ միամյակների վերքերի տրամագիծը հասնում է 1,1 սմ, միջինը 0,7 սմ, իսկ վերքերի լրիվ խցանացումը տեղի չի ունեցել։

Նարինջ սորտի միամյակների 42%-ը ունեն վերքերի լրիվ խցանացում, մյուսների մոտ այն հասնում է 0,1 սմ—0,4 սմ, միջինը 0,2 սմ, իսկ կոնտրոլի մոտ՝ հասնում է 1,3 սմ և լրիվ խցանացում տեղի չի ունենում։

Նույն երևույթը նկատվում է նաև երկրորդ ժամկետում, որի ընթացքում վայրացները հեռացվել են, երբ պատվաստաշիվերը հասել են 4,5 սմ երկարության։

Հաշվառումները ցույց են տվել, որ երկրորդ ժամկետում ևս ստացվում են դրական արդյունքներ։ Առանց բութակի աճեցրած միամյակները

կոնտրոլի համեմատությամբ ունեն լավ ցուցանիշներ։ Այսպես օրինակ՝ դեղձերից ճուղուրի սորտի միամյակներն առանց բութակի անցնելիս նրանց 28%-ը ունեցել են վերքերի լրիվ խցանացում, մյուսների մոտ այն հասնում է 0,4 սմ, իսկ կոնտրոլ միամյակների վերքերի միջին տրամագիծը հասնում է 0,7 սմ և լրիվ խցանացում տեղի չի ունեցել։

Ծիրանների սորտերը նույնպես առանց բութակի անցնելիս միամյակների 12—47%-ը ունեն վերքերի լրիվ խցանացում, իսկ կոնտրոլի մոտ նույնիսկ վերքերի խցանացման հետքեր չեն նկատվում։ Նույնը կարելի է ասել նաև խնձորի ու տանձի մասին (տես № 3 աղյուսակ)։

*Միամյակների չափումների արդյունքները, որոնց վայրաղները հեռացվել են, երբ պատվաստաշիվերը հասել են 4—5 սմ երկարության*

Աղյուսակ 1

| Տեսակը | Սորտը | Վարիանտ | Սանտիմետրներով | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հաշվ. միամյակ. քան. | Միամյակ. երկարութ. | Միամյակ. հաստութ. | Աճի գումարը | Վերքի տրամագիծը | Վերքերի խցանացումը |
| 1947 թ. Ծիրան | Երևանի | Առանց բութակի | 50 | 101,0 | 1,25 | | | |
| | | Բութակով | 50 | 84,15 | 1,07 | | | |
| Դեղձ | Ճուղուրի | Առանց բութակի | 50 | 95,7 | 1,75 | | | |
| | | Բութակով | 50 | 89,8 | 1,13 | | | |
| | Նարինջի | Առանց բութ. | 50 | 118,3 | 1,46 | | | |
| | | Բութակով | 50 | 117,0 | 1,45 | | | |
| 1948 թ. Ծիրան | Երևանի | Առանց բութակի | | | | | | |
| | | Բութակով | 50 | 173 | 1,72 | 345 | 0,7 | — |
| | Սաթենի | Առանց բութ. | 50 | 147 | 1,47 | 262 | 1,45 | — |
| | | Բութակով | 50 | 150 | 1,77 | 291 | 0,5 | — |
| | Կանաչենի | Առանց բութ. | 50 | 138 | 1,59 | 203 | 1,2 | — |
| | | Բութակով | 50 | 140 | 1,14 | 219,3 | 0,5 | — |
| | Խոսրովենի | Առանց բութ. | 50 | 111 | 1,1 | 192 | 0,8 | — |
| | | Բութակով | 50 | 116 | 1,11 | 176 | 0,6 | — |
| | Նարինջի | Առանց բութ. | 50 | 101 | 1,02 | 162 | 0,86 | — |
| Դեղձ | | Բութակով | 50 | 80,0 | 1,45 | 204 | 0,3 | — |
| | Լոձ | Առանց բութ. | 50 | 71,8 | 1,4 | 180 | 1,3 | — |
| | | Բութակով | 50 | 80,0 | 1,9 | 318 | 0,48 | — |
| Խնձոր | Կանդաղակ. [illegible] | Առանց բութ. | 50 | 72,6 | 1,76 | 300 | 1,27 | — |
| | | Բութակով | 50 | 112 | 1,27 | 172 | — | — |
| | Լոնդոնի պեպին | Առանց բութ. | | | | | | |
| | | Բութակով | 50 | 109 | 1,2 | 137 | — | — |
| | ամառվա ապորտ | Առանց բութ. | 50 | 111 | 1,2 | 120 | — | — |
| | | Բութակով | 50 | 109 | 1,2 | 105 | — | — |
| | Կալվիլ | Առանց բութ. | 50 | 106 | 1,06 | 106 | — | — |
| | | Բութակով | 50 | 86 | 1,05 | 86 | — | — |

Այսպիսով փորձնական աշխատանքների տվյալներն ապացուցում են, որ Հայկական ՍՍՌ-ի ցածրադիր գոտում ծիրանի, դեղձի, խնձորի, տանձի և այլն միամյակների առանց բութակի աճեցումը հնարավոր և նպատակահարմար է հետևյալ գրական ցուցանիշների պատճառով։

1. Միամյակներն առանց բութակի աճեցնելու ընթացքում չեն նկատվել անկյունների ծամածվելու, ուղղահայաց դրությունից թեքվելու և կոտրվելու դեպքեր.

2. Առանց բութակի միամյակներն ունեցել են ուղղահայաց աճ, պատվաստակալի հետ հեռացման որոշ անկյուն չեն կազմել, որի հետևանքով մեծացել է պատվաստակալի և պատվաստաշիվի ներաճման մակերեսը, որով մեծացել է նաև ներաճման ամրությունը։

3. Միամյակներն առանց բութակի աճեցնելու դեպքում ավելացել է ստանդարտ տնկանյութի քանակը, որը պայմանավորվում է միամյակների ավելի երկարությամբ, հաստությամբ և ընդհանուր աճով (տես աղյուսակ №№ 1, 2, 3-ի համապատասխան սյունակները) կոնտրոլի համեմատությամբ։

Միամյակների չափումների արդյունքները, որոնց վայրագները հեռացվել են անմիջապես պատվաստած աչքից վերև

Պտղատ. [illegible] տնկարան

Աղյուսակ 2

| Տեսակը | Սորտը | Վարիանտը | Ստանդարտներով | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Չափված միամ. քանակ. | Միամյակի երկարութ. | Միամյակի հաստութ. | Աճի գումարը սմ | Վերքի տրամագիծը | Ստանդարտի ավելացումը % |
| Ծիրան | Երևանի | Առանց բութ. | 50 | 134,0 | 1,56 | 238 | 0,4 | 30,0 |
| | | Բութակով | 50 | 125,0 | 1,4 | 210 | 1,0 | — |
| | Խոսրովենի | Առանց բութ. | 50 | 115,0 | 1,6 | 195 | 0,3 | 28,0 |
| | | Բութակով | 50 | 113,0 | 1,5 | 180 | 0,7 | — |
| | Աղջանաբադ | Առանց բութ. | 50 | 121,0 | 1,45 | 209 | 0,3 | 20,0 |
| | | Բութակով | 50 | 111,0 | 1,3 | 175 | 0,63 | — |
| | Նուրին | Առանց բութ. | 50 | 118,4 | 1,51 | 186,5 | 0,23 | 42 |
| | | Բութակով | 00 | 113,0 | 1,35 | 154,0 | 0,7 | — |
| | Արութայենի | Առանց բութ. | 50 | 119,5 | 1,51 | 198,0 | 0,26 | 22 |
| | | Բութակով | 50 | 106,0 | 1,4 | 159,0 | 0,9 | — |

Բացի որակական ցուցանիշներից, միամյակներն առանց բութակի աճեցնելը կարևոր առավելություններ ունի նաև տնտեսական տեսակետից։

Միամյակներն առանց բութակի աճեցնելու դեպքում կրճատվում են մի շարք՝ մեքենայացման չենթարկվող և շատ բանվորական ձեռքեր պահանջող աշխատանքներ, ինչպես օրինակ՝ պատվաստաշիվերը երկու անգամ բութակին կապելը, առաջին կապի արձակելը, երկրորդ կապի ժամա-

Միամյակների չափումների արդյունքները, որոնց վարիանտները հետազոտվել են, երբ պատվաստումները հասել են 4—5 սմ երկարության

Աղյուսակ 9

| Տեսակը | Սորտը | Վարիանտը | Ստացիոնարներով | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Հաշվ. միամ. քան. | Միամյակի երկարութ. | Միամյակի հաստութ. | Աճի ցուցանիշը | Վեգետ.-ի տևողությունը | Վնասված %-ով |
| Ծիրան | Երևանի | Առանց բութ. | 50 | 157,7 | 1,76 | 383,7 | 0,28 | 12,0 |
| | | Բութակով | 50 | 135,0 | 1,5 | 278,0 | 0,0 | — |
| | Սաթենի | Առանց բութ. | 50 | 130,0 | 1,6 | 344,8 | 0,27 | 47,0 |
| | | Բութակով | 50 | 125,5 | 1,5 | 317,0 | 0,96 | — |
| Դեղձ | Նարինջի | Առանց բութ. | 50 | 65,5 | 1,5 | 273,0 | 0,4 | — |
| | | Բութակով | 50 | 68,0 | 1,47 | 251,0 | 1,11 | — |
| | Լոռ | Առանց բութ. | 50 | 72,9 | 1,6 | 313,2 | 0,9 | — |
| | | Բութակով | 50 | 70,0 | 1,5 | 273,3 | 1,2 | — |
| | Ճուզուրի | Առանց բութ. | 50 | 70,0 | 1,6 | 255,0 | 0,4 | 28 |
| | | Բութակով | 50 | 68,7 | 1,5 | 243,0 | — | — |
| Խնձոր | Ռենետ Սիմիրենկո | Առանց բութ. | 50 | 140,0 | 1,87 | 218,0 | 0,64 | 12,5 |
| | | Բութակով | 50 | 140,0 | 1,7 | 150,0 | 1,04 | — |
| | Դեղին Բելֆլյոր | Առանց բութ. | 50 | 139,0 | 2,15 | 198,0 | 0,6 | 4,0 |
| | | Բութակով | 50 | 112,0 | 1,72 | 185,0 | 0,96 | — |
| Տանձ | Մալաչա | Առանց բութ. | 50 | 113,0 | 2,2 | 125 | 0,5 | 10,0 |
| | | Բութակով | 50 | 106,0 | 1,7 | 106 | 0,94 | — |

ռակ, բութակների մացառներից 3—4 անգամ մաքրելը և բութակների հեռացումը ամռան վերջերին։

Այս աշխատանքները կատարելու համար միջին հաշվով պահանջվում է 212—200 բանվորական օր՝ մեկ հեկտարին, որը կազմում է տնկարանի 2-րդ դաշտի ընդհանուր աշխատանքների 35—40%-ը, իսկ առանց բութակի աճեցնելու դեպքում բանվորի խնայողությունը հասնում է 175—245 բանվորական օրի (տես աղյուսակ № 4)։

Երեք տարիների փորձնական աշխատանքների միանգամայն դրական արդյունքներն ապացուցել են միամյակներն առանց բութակի աճեցնելու նպատակահարմարությունը։

Մեր բերած փորձնական տվյալների հիման վրա անհրաժեշտ է այս միջոցառումը ներդնել արտադրության մեջ արդյունաբերական պտղաբուծության շրջանների մի շարք տնկարաններում, միաժամանակ շարունակել նրանց վրա անհրաժեշտ դիտողություններ՝ վերջնական եզրակացության անելու նպատակով։

Բանվորական ուժի պահանջը միամյակները բութակով և առանց բութակի աճեցնելու դեպքում

Աղյուսակ 4

| Աշխատանքի տեսակը | Բութակով | | | Առանց բութակի | | |
|---|---|---|---|---|---|---|
| | Միամյակների քանակը մեկ հեկտարում | Արտադրական նորման հատով | Բանվորի աշխ. օրեր մեկ հեկտարի համար | Միամյակների քանակը մեկ հեկտ. | Արտադրական նորման մեկ հեկտարի համար | Բանվորի աշխ. օրեր մեկ հեկտարի համար |
| Վայրագների հեռացումը թողնելով բութակ | 25—30,000 | 1000 | 25—30 | | | |
| Վայրագների հեռացումն աչքի վերևից | — | — | — | 25—30,0000 | 1000 | 25,30 |
| Պատվաստաչիվի 1-ին կապը | 25—30,000 | 600 | 40—50 | — | — | — |
| Պատվաստաչիվի 2-րդ կապը | » | 800 | 30—35 | — | — | — |
| Վայրի մացառների մաքրումը բութակի վրայից 3—4 անգամ | » | 1000 | 75—120 | — | — | — |
| Բութակների հեռացումը ամառն վերջերին | » | 800 | 30—40 | — | — | — |
| Վերքը ծածկել մածիկով կամ օլիֆով | » | 2000 | 12—15 | 25—30,0000 | 2000 | 12—15 |
| | | | 212—290 | | | 37—45 |

Վայրագները հեռացնելու ժամանակ անհրաժեշտ պայման պիտի համարել վերքերը մածիկով կամ օլիֆով ծածկելը։

Վերքերը բաց թողնել չի կարելի, որովհետև արևի և քամիների ազդեցության հետևանքով վերքերի վրա փայտանյութը կչորանա և կճաքճքվի, որից կդանդաղի վերքի խցանացումը։

Հայկական ՍՍՌ
Գիտությունների Ակադեմիայի
Պտղաբուծության Ինստիտուտ

Ստացվել է 12 IV 1950

В. С. Захарян

## Культура окулянтов без шипа

### Р е з ю м е

В практике плодоводства в питомниках ведется культура окулянтов с шипами, что связано с применением ряда трудоемких работ, не поддающихся механизации.

Для выяснения возможности культуры окулянтов без шипа в низменной зоне Армянской ССР, в течение последних трех лет были проведены опыты над абрикосами, персиками, яблонями и грушами.

В 1947 и 1948 г. г. удаление дичков проводилось в срок, когда благородные побеги достигали 4—5 см длины.

В 1949 г. удаление дичков проводилось в два срока: первый, когда дички и привитые глазки только проявляли признаки жизнедеятельности, второй, когда благородные побеги достигли 4—5 см. длины.

В результате этих опытов оказалось, что по всем породам и сортам у окулянтов без шипа длина, толщина и средняя сумма прироста сравнительно выше, чем у контрольных (табл. 1, 2 и 3), вследствие чего повышается выход стандартных саженцев.

У окулянтов без шипа к осени диаметр ран был намного меньше, чем у контрольных, у которых до конца вегетации не образовался калюсный наплыв и даже не намечалось начало зарастания.

При этом не наблюдаются искривленности и отклонения от вертикального положения и случаев поломки от сильных ветров, характерных для низменной зоны Армянской ССР. Наоборот, они имели вертикальный рост, не образовали углов отхождения с подвоями, поверхность срастания подвоев с привоями значительно увеличилась, следовательно увеличилась и прочность их срастания.

Выращивание окулянтов без шипов имеет ряд преимуществ и с экономической точки зрения, при этом исключается ряд трудоемких ручных работ, как то: две подвязки к шипу, 3—4-х кратное удаление поросли на дичках и вырезка шипов, экономия в рабсиле, которая составляет от 175 до 245 рабочих дней на га второго поля питомника.

Необходимо этот способ выращивания окулянтов внедрить в производство и одновременно повторить опыт для окончательных выводов.